



ՄԱՍԼՈ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՄԱԲԳ-ի հայաստանյան գրասենյակը պաշտոնապես հրապարակում է «ՀՀ Օրենսդրության փորձաքննությունը գենդերային բռնության տեսանկյունից» զեկույցը

Երևան, 18 փետրվարի, 2010թ.

Այսօր, ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակում տեղի ունեցավ ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի «Ընդդեմ գենդերային բռնության Հարավային Կովկասում» ծրագրի շրջանակներում իրականացված ՀՀ Օրենսդրության գենդերային տեսանկյունից փորձաքննության արդյունքների զեկույցի շնորհանդեսը: Միջոցառման նպատակն էր ներկայացնել ազգային և միջազգային իրավական փորձագետների խմբի կողմից իրականացրած փորձաքննության արդյունքները:

ՀՀ օրենսդրության փորձաքննության նպատակն է քննել, թե որքանով են Հայաստանի ազգային օրենքները համահունչ գենդերային բռնությանն առնչվող միջազգային փաստաթղթերին, իրավական նորմերին և սկզբունքներին, ինչպես նաև մշակել գենդերային բռնությանն առնչվող անհրաժեշտ փոփոխությունների առաջարկությունների փաթեթ, որը հետագայում կներկայացվի ՀՀ կառավարությանը:

Զեկույցը ներառում է Հայաստանի կարևորագույն իրավական փաստաթղթերի՝ որոնք են ՀՀ Սահմանադրությունը, ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը, ՀՀ ընտանեկան օրենսգիրքը, ՀՀ աշխատանքային օրենսգիրքը, ՀՀ քրեական և քրեական դատավարության օրենսգրքերը, ՀՀ սոցիալական ոլորտի և առողջապահության ոլորտի իրավական ակտերը, գենդերային բռնության տեսանկյունից փորձաքննության մանրամասն վերլուծություն:

Բացման իր խոսքում ՄԱԿ-ի մշտական համակարգող/ՄԱԶԾ մշտական ներկայացուցիչ տկն. Դաֆինա Գերչևան, ողջունելով ներկաներին, նշեց. «Համընդհանուր մակարդակով գենդերային բռնության դեմ պայքարի և գենդերային անհավասարությունների վերացման կարևորության խնդիրներն արտացոլվել են միջազգային մի շարք փաստաթղթերում, ինչպիսիք են Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին ՄԱԿ-ի կոնվենցիան և Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական կոնվենցիան: Չնայած ազգային մակարդակում զնալով ավելի շատ երկրներ են կատարում իրենց՝ կանանց պաշտպանելու պարտավորությունները հիմնվելով համապարփակ օրենսդրության վրա, սակայն դեռևս ավելի շատ ջանքեր են անհրաժեշտ օրենքների կիրարկման, զրհերի և տուժվածներին մատուցվող ծառայությունների բանակի ավելացման և գենդերային բռնությունը հանդուրժող, արդարացնող կամ անտեսող վերաբերմունքի և վարքագծի վերացման համար: Միջազգային փորձը ցույց է տալիս, որ քանի դեռ չի գործում պատշաճ իրավական շրջանակ, շատ քիչ բան է հնարավոր իրականացնել կանանց հանդեպ բռնության վերացման ուղղությամբ իրական քայլեր անելու համար»:

Այնուհետև, ազգային իրավական փորձագետների խումբը ներկայացրեց ազգային օրենսդրությունում գենդերային բռնության տեսանկյունից անհրաժեշտ փոփոխություններին առնչվող հիմնական եզրահանգումներն ու առաջարկությունները: Փորձաքննության արդյունքների ներկայացումն ավարտվեց հարց ու պատասխանով:

Միջոցառմանը ներկա էին կանանց իրավունքների և գենդերային խնդիրների ոլորտում գործող կառավարության մարմինների, միջազգային հանրության, օտարերկրյա և տեղական ՀԿ-ների, ինչպես նաև լրատվամիջոցների ներկայացուցիչներ:

ՄԱԲԳ-ն՝ ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամը, միջազգային զարգացման գործակալություն է, որը սատարում է յուրաքանչյուր տղամարդու, կնոջ և երեխայի՝ առողջ կյանք վարելու և հավասար հնարավորություններ ունենալու իրավունքները: ՄԱԲԳ-ն աջակցում է երկրներին քաղաքականությունների և ծրագրերի մշակման գործընթացում բնակչության տվյալների ներգրավվման միջոցով, որն իր հերթին նվազեցնում է աղքատությունն ու ջատագովում, որ յուրաքանչյուր հղիություն լինի ցանկալի, յուրաքանչյուր ծնունդ՝ անվտանգ, յուրաքանչյուր երիտասարդ գերծ լինի ՄԻԱՎ/ՁԻԱԳ-ից, և յուրաքանչյուր աղջիկ և կին ստանա արժանապատիվ և հարգալից վերաբերմունք:

Հավելյալ տեղեկությունների համար կարող եք դիմել Ալիդա Դազարյանին՝ ghazaryan@unfpa.org, հեռ. 543417, կամ Ջինա Սարգիզովային՝ sargizova@unfpa.org, հեռ. 541792: